CDTFA
CALIFORNIA DEPARTMENT OF TAX AND FEE ADMINISTRATION

ՍԻԳԱՐԵՏԻ և ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԸ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅՈՒՄ

Լիցենզիայի պահանջները մանրաձախ առևտրով զբաղվողների համար

Ի՞նչ է սիգարետը

«Սիգարետը»[1] սահմանվում է որպես ծխելու համար նախատեսված ցանկացած չափի կամ ձևի գլանված արտադրանք, որը.

- Պատրաստված է ցանկացած տեսակի ծխախոտի տերևներից, համային հավելումներով կամ առանց և
- Փաթաթված է թղթով կամ այլ նյութով:

Բացառություն. Ծխախոտի տերևով փաթաթված արտադրանքը կամ այն արտադրանքը, որի պատյանը հիմնականում ծխախոտից է (օրինակ՝ սիգարները) չեն համարվում սիգարետներ, եթե դրանց հազար հատի քաշը գերազանցում է երեք ֆունտը: Դրանք համարվում են ծխախոտային արտադրանք:

Ի՞նչ է ծխախոտային արտադրանքը

«Ծխախոտային արտադրանքը»[2]ներառում է, բայց չի սահմանափակվում.

1. Բոլոր տեսակի սիգարները (ներառյալ փոքր սիգարները),
2. Ծխելու կամ ծխամորձի ծխախոտ (ներառյալ նարգիլե), ծամելու ծխախոտ և քթախոտ,
3. Ցանկացած արտադրանք, որը պարունակում է, պատրաստված է կամ ստացվել է ծխախոտի ցանկացած քանակությունից և նախատեսված է մարդկանց սպառման համար,
4. Ցանկացած արտադրանք, որը պարունակում է, պատրաստված է կամ ստացվել է նիկոտինի ցանկացած քանակությունից, նախատեսված է մարդկանց սպառման համար և վաճառվում է մատակարարման սարքով/ համակարգով կամ առանց դրա (օրինակ՝ նիկոտին պարունակող էլեկտրոնային սիգարետի հեղուկ),
5. Էլեկտրոնային սիգարետներ (eCigarettes) կամ ցանկացած սարք կամ մատակարարման համակարգ, որը վաճառվում է նիկոտին պարունակող նյութի հետ միասին, մեկ գնով, և
6. Էլեկտրոնային ծխախոտի ցանկացած բաղադրիչ, մաս կամ լրասարք, որն օգտագործվում է սարքի շահագործման ընթացքում և վաճառվում է նիկոտինի հետ միասին (օրինակ՝ սարքի՝աշխատանքի ընթացքում օգտագործվող մարտկոց, որը վաճառվում է նիկոտինի հետ միասին մեկ գնով):

Կալիֆորնիայի նահանգային օրենքը նույնպես սահմանում է ծխախոտային արտադրանքը՝[3] սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզավորման նպատակներով, որը ներառում է՝

1. Մարդու սպառման համար նախատեսված ծխախոտ կամ նիկոտին պարունակող, դրանցից արտադրված կամ ստացված արտադրանք,

2. Նիկոտին կամ այլ գոլորշիացված հեղուկներ մատակարարող էլեկտրոնային սարք, և

3. Ծխախոտային արտադրանքի բաղադրիչ, մաս կամ լրասարք, անկախ նրանից՝ վաճառվում է այն առանձին, թե ոչ:

Դրանցից են էլեկտրոնային սիգարետները, ատոմիզատորները, վեյպինգի բալոնները կամ մոդերը, ինչպես նաև էլեկտրոնային հեղուկները (eLiquid) կամ էլեկտրոնային հյութերը (eJuice) և ոչ միայն:

Ծխախոտային արտադրանքի մեջ չի ներառվում սիգարետը, սննդամթերքը,[4] կամ որևէ այլ ապրանք, որը U.S. Food and Drug Administration-ի (ԱՄՆ Սննդի և դեղամիջոցների վարչություն) կողմից հաստատվել է վաճառքի համար որպես ծխախոտի օգտագործումը դադարեցնելու միջոց կամ այլ թերապևտիկ նպատակների համար (օրինակ՝ նիկոտինային կպչուն ժապավենները):

---

[1] Revenue and Taxation Code (Եկամուտների և հարկման օրենսգիրք R&TC) բաժին 30003:

[2] R&TC բաժիններ 30121 և 30131.1:

[3] Business and Professions Code (Գործարարության և մասնագիտությունների օրենսգիրք B&PC) բաժին 22950.5(d):

[4] R&TC բաժին 6359:

Ովքե՞ր են պարտավոր ունենալ Կալիֆորնիայի սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիա:

Կալիֆորնիայում սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրով զբաղվողները պարտավոր են ունենալ սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիա և պետք է.

- Ունենալ վավեր լիցենզիա Կալիֆոռնիայում լիցենզավորված դիստրիբյուտորներից կամ մեծածախ վաճառքով զբաղվողներից հարկվող ապրանքներ գնելուց կամ սպառողներին սիգարետի կամ այլ ծխախոտային արտադրանքի մանրածախ վաճառք իրականացնելուց առաջ (Cigarette and Tobacco Products Licensing Act of 2003 (2003 թվականի սիգարետի և ծխախոտային արտադրանքի լիցենզավորման մասին օրենք)[Licensing Act]):[5]
- Ունենալ առանձին լիցենզիա յուրաքանչյուր վայրի կամ վաճառքի ավտոմատ սարքի համար, որի միջոցով իրականացվում է սիգարետի կամ ծխախոտային արտադրանքի մանրածախ վաճառք:
- Ձեր լիցենզիան փակցրեք յուրաքանչյուր վաճառքի կետում՝ հանրության համար տեսանելի ձևով:
- Վճարեք սկզբնական լիցենզիայի դիմումի վճարը, ինչպես նաև լիցենզիայի տարեկան երկարաձգման վճար յուրաքանչյուր վայրի համար:

Նկատի ունեցեք. Մանրածախ առևտրով զբաղվողները պետք է ստանան դիստրիբյուտորի լիցենզիա նախքան չհարկված սիգարետներ կամ ծխախոտային արտադրանք գնելը նահանգից դուրս գտնվող վաճառողից, որը չունի «Լիցենզավորման մասին» օրենքի համաձայն տրված լիցենզիա: Մանրածախ առևտրով զբաղվողը չի կարող սիգարետ կամ ծխախոտային արտադրանք վաճառել մեկ այլ մանրածախ առևտրականի: Մեկ այլ մանրածախ առևտրականի հետ առևտրով զբաղվելու համար անհրաժեշտ է դիստրիբյուտորի կամ մեծածախ առևտրի լիցենզիա:

Լիցենզիայի վճարներին կարող եք ծանոթանալ այստեղ. *www.cdtfa.ca.gov/taxes-and-fees/special-taxes-and-fees-tax-rates/#cigarettelic:*

Սիգարետը և ծխախոտային արտադրանքը տվյալ նահանգում սպառման դեպքում, ենթակա է ակցիզային հարկման՝ համաձայն Cigarette and Tobacco Products Tax Law-ի (Սիգարետի և ծխախոտային արտադրանքի հարկի մասին օրենք) [6] : Ակցիզային հարկերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար՝ տես հրապարակում 93, *Cigarette and Tobacco Products Taxes (Սիգարետի և ծխախոտային արտադրանքի հարկեր)*, որը կարող եք գտնել այստեղ. *www.cdtfa.ca.gov/formspubs/all-forms-and-publications.htm:*

California Electronic Cigarette Excise Tax (Կալիֆորնիայի էլեկտրոնային սիգարետի աքցիզային հարկ)

Էլեկտրոնային սիգարետի մանրածախ առևտրով զբաղվողները պարտավոր են դրա վաճառքի ժամանակ գնորդից (Կալիֆոռնիայի սպառող) գանձել California Electronic Cigarette Excise Tax (Կալիֆորնիայի էլեկտրոնային ծխախոտի ակցիզային հարկ, CECET) [7] նիկոտին պարունակող կամ նիկոտինի հետ միասին վաճառվող էլեկտրոնային ծխախոտի մանրածախ վաճառքի գնի 12.5 տոկոսի (12.50%) չափով: CECET-ը գանձվում է վաճառքի հարկի և օգտագործման հարկի հետ միասին:

Նիկոտին պարունակող կամ դրա հետ միասին վաճառվող էլեկտրոնային սիգարետների մանրածախ առևտրով զբաղվողը պարտավոր է.

- Գրանցվել CECET վկայականի համար (հաշիվ),
- Ցանկացած ցուցանակի կամ գնանշման պիտակի վրա նշված գնի մեջ ներառեք CECET գումարը,
- Գնորդից վաճառքի պահին գանձել նիկոտին պարունակող կամ նիկոտինի հետ վաճառվող էլեկտրոնային սիգարետների մանրածախ գնի 12.5% (12.50%) չափով CECET հարկ,
- Գնորդին տրամադրել կտրոն կամ այլ փաստաթուղթ, որտեղ առանձին նշված է CECET հարկի չափը և յուրաքանչյուր էլեկտրոնային սիգարետի մանրածախ վաճառքի համար վճարված գումարը:

---

[5] Հատված 8.6 (սկսած բաժին 22970) B&PC-ի:

[6] Մաս 13 (սկսած բաժին 30001) R&TC-ի հատված 2:

[7] Մաս 13.6 (սկսած բաժին 31000) R&TC-ի հատված 2:.

- Էլեկտրոնային եղանակով ներկայացնել CECET հայտարարագիր, և
- Մեզ վճարել ակցիզային հարկ:

Ավելին իմանալու համար՝ ծանոթացեք *Կալիֆորնիայի էլեկտրոնային սիգարետի ակցիզային հարկի ուղեցույցին* այստեղ. *www.cdtfa.ca.gov/taxes-and-fees/california-electronic-cigarette-excise-tax/*:

Կարո՞ղ է շրջիկ վաճառողը ստանալ մանրածախ առևտրի լիցենզիա սիգարետ և այլ ծխախոտային արտադրանք վաճառելու համար:

Ոչ: «Շարժական վայրը» չի համապատասխանում մանրածախ առևտրի համար նախատեսված վայրի օրենսդրական սահմանմանը: Եթե դուք աշխատում եք մատակարարման բեռնատարից, լանչի վագոնից կամ այլ շարժական օբյեկտից, ապա դուք չեք համապատասխանում Կալիֆորնիայի սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիայի պահանջներին և, հետևաբար, չեք կարող վաճառել սիգարետ կամ ծխախոտային արտադրանք ձեր բեռնատարից, վագոնից կամ Կալիֆորնիայի տարածքում գործող այլ շարժական օբյեկտից:

Ինչպե՞ս դիմել լիցենզիայի համար կամ երկարաձգել այն

Դուք կարող եք դիմել լիցենզիա ստանալու կամ ձեր լիցենզիան երկարաձգելու համար մեր առցանց ծառայությունների հարթակում. *onlineservices.cdtfa.ca.gov/__/*: Եթե ունեք հարցեր կամ ցանկանում եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ լիցենզիայի համար առցանց դիմելու կամ այն երկարաձգելու վերաբերյալ, կապվեք մեր հաճախորդների սպասարկման կենտրոնի հետ՝ 1-800-400-7115 հեռախոսահամարով (TTY՝ 711), երկուշաբթիից ուրբաթ, ժամը 7:30-ից մինչև 17:00-ը (խաղաղօվկիանոսյան ժամանակով), բացի պետական տոներից:

Ե՞րբ է լրանում լիցենզիայի ժամկետը

Մանրածախ առևտրի լիցենզիան վավեր է տրամադրման օրվանից 12 ամիս, փոխանցման ենթակա չէ, լիցենզիայի համար գանձվող վճարը չի կարող համամասնորեն բաշխվել և այն ենթակա է երկարաձգման ամեն տարի: Եթե ավելացնեք մեկ այլ մանրածախ վաճառակետ, ձեր լիցենզիան տվյալ վաճառակետի համար կերկարաձգվի 12 ամսով՝ սկսած այն ամսվանից, երբ ստացել եք ձեր առաջին վաճառակետի լիցենզիան: Մինչև ձեր լիցենզիայի ժամկետի լրանալը, մենք ձեզ կուղարկենք լիցենզիան երկարաձգելու մասին էլեկտրոնային նամակ և գրավոր հիշեցում: Ձեր սիգարետի և ծխախոտի մանրածախ վաճառքի լիցենզիան պահպանելու համար պետք է լրացնեք և մեզ ներկայացնեք երկարաձգման առցանց դիմում: Երկարաձգման դիմումի հետ միասին պետք է կատարեք երկարաձգման համար վճար: Եթե չերկարաձգեք ձեր լիցենզիան և ժամանակին չվճարեք երկարաձգման համար նախատեսված վճարը, ձեր լիցենզիան կհամարվի անվավեր: Դուք չեք կարող վաճառել սիգարետ կամ ծխախոտային արտադրանք առանց վավեր սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիայի:

Ինչ պես վճարել լիցեն զիայիդիմումի կամլիցենզիայիերկարաձգման վճարները

Դուք կարող եք վճարում կատարել առցանց՝ անմիջապես ձեր բանկային հաշվից կամ վարկային քարտով: Ավելին իմանալու համար այցելեք մեր կայք. *www.cdtfa.ca.gov/services/make-a-payment.htm*:

Ես ունեմ առևտրի վկայական: Անհրաժեշտ է նաև ձեռք բերել այս մանրածախ առևտրի լիցենզիան:

Այո: Մեր կողմից տրամադրվող մյուս վկայականների ու լիցենզիաների հետ մեկտեղ սիգարետի և ծխախոտային արտադրանքի լիցենզավորումը լրացուցիչ լիցենզավորում է հանդիսանում: Սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիա ստանալու համար դուք պետք է ձեռք բերեք և ունենաք վավեր Կալիֆորնիայի մանրածախ առևտրի վկայական և ամեն տարի երկարաձգեք ձեր լիցենզիան:

Նահանգային լիցենզիան պահանջվում է Licensing Act-ով (Լիցենզավորման մասին օրենքով): Այս օրենքը չի փոխարինում ձեզանից պահանջվող տեղական որևէ այլ սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիային: Բացի այդ, որոշ տեղական իրավասու մարմիններ ունեն կանոնակարգեր, որոնք սահմանափակում են ծխախոտի մանրածախ առևտրով զբաղվողների թիվը կամ թվային հարաբերությունը տվյալ աշխարհագրական տարածքում: Մինչև սիգարետի և ծխախոտի մանրածախ առևտրի լիցենզիայի կամ այն երկարաձգելու համար դիմելը, խորհուրդ ենք տալիս խորհրդակցել ձեր տեղական առողջապահության վարչության հետ՝ պարզելու համար տեղական ծխախոտային արդյունաբերության լիցենզավորման պահանջները, որոնք կարող են մեր կողմից սահմանված պահանջներից ավելի խիստ լինել:

ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՐՈՎ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ունենալ վավեր առևտրի վկայական և սիգարետի և ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիա։
- Ճիշտ ժամանակին վճարել լիցենզիայի երկարաձգման վճարը և լրացնել երկարաձգման դիմումը։
- Տեղադրել լիցենզիան բոլոր մանրածախ առևտրի կետերում, հանրության համար տեսանելի վայրում։
- Գնեք միայն սիգարետներ և հարկված ծխախոտային արտադրանքներ, որոնց վրա փակցված են Կալիֆորնիայի հարկային դրոշմանիշեր։
- Պահպանեք սիգարետի և ծխախոտային արտադրանքի գնման հաշիվ-ապրանքագրերը չորս տարի։
  - Յուրաքանչյուր լիցենզավորված կետից ծխախոտի և ծխախոտային արտադրանքի գնման ամբողջական և ընթեռնելի հաշիվ-ապրանքագրերը պահպանեք գնման օրվանից հետո առնվազն մեկ տարի։ Հաշիվ-ապրանքագրերը ապրանքի հետ մեկտեղ պետք է պահվեն նույն տեղում։
- Անհրաժեշտության դեպքում թույլ տվեք մեր ներկայացուցիչներին կամ իրավապահ մարմինների աշխատակիցներին վերանայել ձեր սիգարետի և ծխախոտային արտադրանքի գնման հաշիվ-ապրանքագրերը։
- Գնեք և վաճառեք միայն Կալիֆոռնիայում վաճառքի համար թույլատրված սիգարետներ և ինքնափաթեթավորված ծխախոտ (roll-your-own tobacco, RYO), որոնք նշված են Գլխավոր դատախազի գրասենյակի Կալիֆորնիայի ծխախոտի տեղեկագրքում (տեղեկագիրք), այստեղ՝ *oag.ca.gov/tobacco/directory*:
- Գնեք և վաճառեք միայն առանց համային հավելումների ծխախոտային արտադրանքներ, որոնք նշված են Կալիֆորնիայի գլխավոր դատախազի առանց համային հավելումների ծխախոտային ապրանքների ցանկում (UTL)։
- Մի՛ գնեք, մի՛ պահեք, մի՛ կամ մի՛ վաճառեք համային հավելումներով սիգարետներ, համային հավելումներով ծխախոտային արտադրանքներ կամ ծխախոտային արտադրանքի համի ուժեղացուցիչներ։
- Մի՛ վաճառեք կանեփ կամ կանեփ պարունակող արտադրանք սիգարետի և ծխախոտային արտադրանքի առևտրի լիցենզիա ունեցող որևէ վայրում։

Ձեր պարտականությունների մասին ավելին իմանալու համար մենք առաջարկում ենք հրահանգիչների կողմից դասավանդվող ուսուցողական աշխատաժողովներ սիգարետի և ծխախոտի մանրածախ առևտրի վերաբերյալ։

Ապրանքի լիկվիդացման ժամանակաշրջան: Երբ Կալիֆորնիայի գլխավոր դատախազը հրահանգում է հեռացնել ծխախոտի արտադրողին կամ ապրանքանիշերի խմբին տեղեկագրքից, դիստրիբյուտորը կամ մեծածախ վաճառողը պարտավոր է այդ մասին տեղեկացնել իր հետ համագործակցող լիցենզավորված մանրածախ առևտրով զբաղվողներին։

Լիցենզավորված մանրածախ առևտրով զբաղվողին թույլատրվում է ունենալ, տեղափոխել և վաճառել հարկային դրոշմանիշներով ծխախոտներ կամ հարկված RYO-ներ՝ տեղեկագրքից արտադրողի կամ ապրանքանիշերի խմբի հանվելու օրվանից ոչ ավելի, քան 60 օր։ 60-օրյա վաճառքի ժամկետից հետո սիգարետները և RYO ծխախոտը ենթակա են առգրավման և ոչնչացման։

Գնման հաշիվ-ապրանքագրի պահանջները: Դիստրիբյուտորներից կամ մեծածախ վաճառողներից ստացած հաշիվ-ապրանքագրերը պետք է լինեն ընթեռնելի և ներառեն ստորև նշված տվյալները.

- Դիստրիբյուտորի կամ մեծածախ վաճառողի անունը, հասցեն, հեռախոսահամարը և լիցենզիայի համարը, որից դուք գնել եք սիգարետը կամ ծխախոտային արտադրանքը։
- Հաշիվ-ապրանքագրում նշված սիգարետի կամ ծխախոտային արտադրանքի համար դիստրիբյուտորի կողմից մեզ վճարվող Կալիֆորնիայի սիգարետի և ծխախոտային արտադրանքի հարկերի գումարը։

  Հաշվի առեք. Լիցենզավորված դիստրիբյուտորը, որը նաև հանդիսանում է լիցենզավորված մանրածախ վաճառող կամ արտադրող, կարող է մեզ վճարման ենթակա սիգարետի և ծխախոտային արտադրանքի հարկերի գումարի փոխարեն նշել հետևյալ հայտարարությունը. «Կալիֆորնիայի

սիգարետի և ծխախոտային արտադրանքի բոլոր հարկերը ներառված են այս հաշիվ-ապրանքագրի ընդհանուր գումարի մեջ»։

- Գնված սիգարետների կամ ծխախոտային արտադրանքի մանրամասն ցանկը.
  - Գնված ծխախոտների վրա պետք է նշված լինի ապրանքանիշի և ոճի անունը, համը, ֆիլտրը, փաթեթավորումը, եթե առկա է, վաճառված արկղերի կամ տուփերի քանակը և վաճառքի գինը։
  - Գնված ծխախոտային արտադրանքը պետք է ներառի ապրանքանիշը, տեսակը (օրինակ՝ ծխամորճ, սիգար կամ RYO ծխախոտ), համը, փաթեթավորումը (օրինակ՝ պարկեր, տուփեր կամ արկղ), վաճառված ապրանքի քանակը և վաճառքի գինը։
- Ձեր անունը, լիցենզավորված վայրի հասցեն և սիգարետի ու ծխախոտի մանրածախ առևտրով զբաղվողի լիցենզիայի համարը։
- Սիգարետները կամ ծխախոտային արտադրանքը գնելու ամսաթիվը։

Վաճառակետերի միջև փոխանցվող սիգարետները և ծխախոտային արտադրանքը։ Որպես կանոն, սիգարետի և ծխախոտային արտադրանքի փոխանցումը չի թույլատրվում։ Այնուամենայնիվ, եթե դուք ունեք մի քանի մանրածախ առևտրով զբաղվող խանութներ, որոնք գրանցված են նույն իրավաբանական անձի ներքո, ապա կարող եք ձեր սիգարետի կամ ծխախոտային արտադրանքի մի մասը տեղափոխել մեկ մանրածախ վաճառակետից մյուսը, եթե տվյալ օբյեկտները տնօրինվում են նույն իրավաբանական անձի կողմից, և դուք՝

- Յուրաքանչյուր փոխանցման վերաբերյալ ունեք փոխանցման գրանցամատյան կամ նման փաստաթուղթ, որը պարունակում է հետևյալ բոլոր տեղեկությունները.
  - Փոխանցման ամսաթիվը։
  - Փոխանցող մանրածախ առևտրով զբաղվողի անունը, հասցեն և լիցենզիայի համարը, որտեղից կատարվել է գնումը։
  - Ստացող մանրածախ առևտրով զբաղվողի անունը, հասցեն և լիցենզիայի համարը, որտեղ փոխանցվել է ապրանքը։
  - Մատակարարի (դիստրիբյուտոր կամ մեծածախ վաճառող) անունը և լիցենզիայի համարը, գնման հաշիվ-ապրանքագրի համարը և սկզբնական գնման ամսաթիվը։
  - Մատակարարի կողմից տրամադրված փոխանցված ապրանքի ընթեռնելի և մանրամասն ցանկ, գնման ամսաթվի և գնման հաշիվ-ապրանքագրի համարի մանրամասն նկարագրությունը և փոխանցված ապրանքի քանակը։
- Գնման օրվանից առնվազն չորս տարի պահպանեք փոխանցման բնօրինակ գրանցամատյանը կամ համապատասխան փաստաթուղթը։
- Փոխանցման օրվանից առնվազն մեկ տարի փոխանցման գրանցամատյանների կամ համապատասխան փաստաթղթերի և գնման հաշիվ-ապրանքագրերի պատճենները պահեք փոխանցման մեջ ներգրավված երկու վայրերում։
- Ստուգման ժամանակ անհաժեշտության դեպքում տրամադրեք փոխանցման գրանցամատյանների կամ նմանատիպ փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև փոխանցված ապրանքների հաշիվ-ապրանքագրերը։

ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄ

Լիցենզիայի ցուցադրում.[8] Եթե դուք ձեր լիցենզիան հանրության համար հստակ և տեսանելի չցուցադրեք սիգարետ կամ ծխախոտային արտադրանք վաճառող յուրաքանչյուր մանրածախ առևտրի կետում, ապա յուրաքանչյուր անգամ կտուգանվեք 500 դոլարի չափով։

Գրառումներ .[9] Դուք պարտավոր եք չորս տարի շարունակ պահել և պահպանել ձեր գրառումները ընթեռնելի, ճշգրիտ և ամբողջական՝ այդ թվում ձեր սիգարետի և ծխախոտային արտադրանքի վերավաճառքի գնման հաշիվ-ապրանքագրերը։ Հաշիվ-ապրանքագրերը պետք է պահվեն մանրածախ առևտրի վայրում գնման օրվանից առնվազն մեկ տարի։ Եթե դուք չեք պահում գրառումներ և դրանք չեք տրամադրում մեր ներկայացուցիչներին կամ ըստ պահանջի չեք տրամադրում իրավապահ մարմնին, ապա դուք կարող եք ենթարկվել քրեական հետապնդման, ենթարկվել տուգանքի մինչև 5000 դոլար չափով, ազատազրկվել շրջանի բանտում մինչև մեկ տարի ժամկետով, կամ երկուսը միասին։

---

[8] B&PC բաժին 22974.5։

[9] B&PC բաժիններ 22974 և 22981։

Ստուգումներ.[10] Մեր ներկայացուցիչներն իրավասու են ստուգումներ անց կացնել ցանկացած վայրում, որտեղ վաճառվում, արտադրվում կամ պահվում են սիգարետ կամ ծխախոտային արտադրանք, կամ որտեղ առկա են անօրինական գործունեության ապացույցներ: Հետևաբար, մեր ներկայացուցիչները և իրավապահ մարմինների աշխատակիցները կարող են ստուգումներ կազմակերպել մանրածախ առևտրի վաճառակետերում և առգրավել ցանկացած համային հավելումներով կամ չհարկված սիգարետներ և ծխախոտային արտադրանք, այդ թվում՝ առանց դրոշմանիշների, այլ նահանգների դրոշմանիշներով կամ կեղծ հարկային դրոշմանիշներով սիգարետները: Ցանկացած անձ, որը հրաժարվում է ստուգում անցկացնելու համար թույլտվություն տալ, համարվում է օրինազանց և ենթակա է տուգանման: Ցանկացած մանրածախ առևտրով զբաղվող անձ, որը ունի չհարկված սիգարետներ, չհարկված ծխախոտային արտադրանք, համային հավելումներով սիգարետներ, համային հավելումներով ծխախոտային արտադրանք կամ ծխախոտային արտադրանքի համի ուժեղացուցիչներ, ենթակա է տուգանքների և տույժերի, այդ թվում լիցենզիայի կասեցման:

Ստուգումների և ձեր իրավունքների մասին ավելին իմանալու համար տե՛ս հրապարակում 152, *Cigarette and Tobacco Product Inspections (Սիգարետի և ծխախոտային արտադրանքի ստուգում)*, և դիտիր մեր *What to Know About Your Cigarette and Tobacco Products Inspection (Ինչ պետք է իմանալ սիգարետի և ծխախոտային արտադրանքի ստուգումների մասին)* տեսանյութը *www.youtube.com/watch?v=2k6Dgtdxo8Q* կայքում:

Անօրինական գնումներ .[11]Մանրածախ առևտրով զբաղվողների համար անօրինական է սիգարետ կամ ծխախոտային արտադրանք գնել մեկ այլ մանրածախ առևտրով զբաղվողից կամ ցանկացած վաճառողից, որը չունի Licensing Act-ով (Լիցենզավորման մասին օրենքի) նախատեսված լիցենզիա: Անօրինական գնում կատարելու դեպքում, ձեր սիգարետը կամ ծխախոտային արտադրանքը կարող են բռնագրավվել, ձեր լիցենզիան կարող է կասեցվել կամ չեղյալ համարվել, և դուք կարող եք ենթարկվել տուգանքի, ազատազրկման կամ երկուսը միասին:

Կալիֆորնիայի սիգարետի և ծխախոտային արտադրանքի դիստրիբյուտորի կամ մեծածախ վաճառողի լիցենզիայի իսկությունը ստուգելու համար այցելեք մեր կայք. *www.cdtfa.ca.gov/taxes-and-fees/cigarette-licensees.htm*:

Անօրինական վաճառք.[11] Այս նահանգում մանրածախ առևտրով զբաղվողների համար անօրինական է համարվում սիգարետ կամ ծխախոտային արտադրանք վաճառելը առանց առևտրի վկայականի և սիգարետի ու ծխախոտային արտադրանքի մանրածախ առևտրի լիցենզիայի, կամ եթե լիցենզավորման մասին օրենքի համաձայն լիցենզիան կասեցվել կամ չեղյալ է համարվել: Անօրինական կերպով սիգարետ կամ ծխախոտային արտադրանք վաճառելու դեպքում՝ մեր ներկայացուցիչները կամ իրավապահ մարմինները կարող են՝ առանց վերադարձի հնարավորության, առգրավել ձեր բոլոր սիգարետներն ու ծխախոտային արտադրանքը:

Արգելվում է համային հավելումներով սիգարետների, համային հավելումներով ծխախոտային արտադրանքի և ծխախոտային արտադրանքի համի ուժեղացուցիչների մանրածախ վաճառքը:[12] 2022 թվականի դեկտեմբերի 21-ից ուժի մեջ մտած համային հավելումներով ծխախոտային արտադրանքի արգելքը(FTPB) արգելում է մանրածախ առևտրով զբաղվողներին, այդ թվում՝ նրանց աշխատակիցներին կամ գործակալներին, վաճառել, առաջարկել կամ վաճառքի նպատակով պահել համային հավելումներով սիգարետներ, համային հավելումներով ծխախոտային արտադրանք և ծխախոտային արտադրանքի համի ուժեղացուցիչներ:

2025 թվականի հունվարի 1-ից մեր ներկայացուցիչները կամ իրավապահ մարմնի աշխատակիցները կարող են առգրավել ձեր բոլոր համային հավելումներով սիգարետները, համային հավելումներով ծխախոտային արտադրանքները կամ ծխախոտային արտադրանքի համի ուժեղացուցիչները: Առգրավված ապրանքները կհամարվեն նահանգի սեփականությունը և կոչնչացվեն: Յուրաքանչյուր առգրավված փաթեթի համար կսահմանվի $50 քաղաքացիական տուգանք: Օրենքը կրկնակի խախտողները նույնպես կենթարկվեն լիցենզիայի կասեցման կամ չեղարկման:

---

[10] R&TC բաժին 30435 և B&PC բաժիններ 22980, 22981, 22974.2, և 22978.3:

[11] B&PC բաժիններ 22974.7, 22980.1, և 22981:

[12] Առողջության և անվտանգության օրենսգիրք բաժին 104559.5 և B&PC section 22974.2:

Լիցենզիայի կասեցում կամ չեղարկում [13] Սիգարետի և ծխախոտային արտադրանքի լիցենզիան վավեր չէ լիցենզիայի կասեցման ընթացքում կամ լիցենզիան չեղարկվելուց հետո: Առանց վավեր լիցենզիայի արգելվում է սիգարետի կամ ծխախոտային արտադրանքի վաճառքը, նվիրատվությունը կամ վաճառքի նպատակով ցուցադրումը:

Մանրածախ առևտրով զբաղվողը, որի լիցենզիան կասեցվել է, կասեցման ժամանակահատվածում պարտավոր է *կասեցման մասին ծանուցումը* փակցնել այն մանրածախ առևտրի վայրում, որտեղ տեղի է ունեցել օրինազանցությունը կամ խախտումը: Մանրածախ առևտրով զբաղվողը, որի լիցենզիան չեղյալ է համարվել, պարտավոր է *չեղարկման մասին ծանուցումը* փակցնել չեղարկման ենթակա մանրածախ առևտրի վայրում՝ չեղարկման ուժի մեջ մտնելու օրվանից 30 օր ժամկետով:

Կասեցման ժամանակահատվածում կամ չեղարկման ուժի մեջ մտնելուց հետո սիգարետի կամ ծխախոտային արտադրանքի շարունակական վաճառքը կամ նվիրատվությունը համարվում է օրինազանցություն և կհանգեցնի անձին մոտ եղած ողջ սիգարետի և ծխախոտային արտադրանքի առգրավմանը և բռնագրավմանը:

Դուք կենթարկվեք $1,000 քաղաքացիական տուգանքի յուրաքանչյուր խախտման համար, եթե.

- Չհրապարակեք կասեցման կամ չեղարկման մասին ծանուցումը ըստ պահանջի:
- Փոփոխման ենթարկեք կասեցման կամ չեղարկման ծանուցումը:
- Հեռացնեք կասեցման կամ չեղարկման ծանուցումը պահանջվող հրապարակման ենթակա ժամանակահատվածից շուտ:
- Շարունակեք ցուցադրել վաճառքի համար նախատեսված սիգարետներ կամ ծխախոտային արտադրանք կասեցման ժամանակահատվածում կամ չեղարկումից հետո:

[13] B&PC բաժիններ 22980.2, 22980.3, 22980.4, 22980.5:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այցելեք մեր կայք՝*www.cdtfa.ca.gov* կամ զանգահարեք Հաճախորդների սպասարկման կենտրոն զանգահարելով 1-800-400-7115 (TTY:711): Հաճախորդների սպասարկման ներկայացուցիչները հասանելի են երկուշաբթիից ուրբաթ առավոտյան 7:30-ից մինչև 17:00 (խաղաղօվկիանոսյան ժամանակով), բացառությամբ պետական տոների:

Հարկ վճարողների իրավունքների պաշտպան

Զանգահարեք անվճար 1-888-324-2798 հեռախոսահամարով, եթե չեք կարողացել ձեզ հասանելի եղանակներով (օրինակ՝ ղեկավարի հետ խոսելով) լուծել առկա խնդիրը:

Նկատի ունեցեք. Ինչպես նշված է շապիկի վրա՝ այս հրատարակությունն ամփոփում է հրատարակման օրվա դրությամբ գործող օրենքներն ու կանոնակարգերը: Այնուամենայնիվ, հրատարակման օրվանից ի վեր օրենքներում կամ կանոնակարգերում ևս կարող են փոփոխություններ տեղի ունեցած լինել: Եթե հրապարակման և օրենքի կամ կանոնակարգերի միջև առկա է հակասություն, ապա որոշումները կհիմնվեն օրենքի և կանոնակարգերի, այլ ոչ թե տվյալ հրապարակման վրա: